ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2024թ. մայիսի 2-ից 5-ը ներառյալ ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Էդուարդ Հակոբյանի՝ Վրաստան գործուղման արդյունքների վերաբերյալ

1. **Անուն, ազգանունը՝**

   Էդուարդ Հակոբյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**

   ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ

3. **Գործուղման վայրը և ժամկետները՝**

   Քաղաք Թբիլիսի, Վրաստան, 2024թ. մայիսի 2-ից 5-ը ներառյալ

4. **Հրավիրող կողմը՝**

   Ասիական զարգացման բանկ

5. **Գործուղման նպատակը՝**

   Մասնակցություն Ասիական զարգացման բանկի 57-րդ տարեկան հանդիպմանը՝ որպես Ասիական զարգացման բանկի Կառավարիչների խորհրդում Հայաստանի Հանրապետության կառավարչին փոխարինող անձ (փոխկառավարիչ):

6. **Քննարկված թեմաները՝**

Ասիական զարգացման բանկի (ԱԶԲ) Կառավարիչների խորհրդի տարեկան հանդիպումները հարթակ են հանդիսանում ԱԶԲ վարչական, ֆինանսական և գործառնական ուղղությունների և վերջիններիս զարգացումների վերաբերյալ համապարփակ տեղեկատվություն ստանալու, ինչպես նաև Ասիայում և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում աղքատության կրճատման և ներառական աճի ապահովման ուղղությունների բացահայտման համար: ԱԶԲ տարեկան հանդիպումները յուրահատուկ պլատֆորմ են երկխոսության, համագործակցության և կապերի ամրապնդման համար: Դրանք

հնարավորություն են ընձեռում երկկողմ հանդիպումներ ունենալ ԱԶԲ բարձրաստիճան պաշտոնատար անձանց և այլ երկրների ներկայացուցիչների հետ, քննարկել ինչպես համընդհանուր հետաքրքրություն ներկայացնող թեմաներ, այնպես էլ ՀՀ և ԱԶԲ համագործակցությանն առնչվող հարցեր: ԱԶԲ տարեկան հանդիպումները դարձել են Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի տնտեսական և սոցիալական զարգացման խնդիրների քննարկման գլխավոր ֆորումը:

ԱԶԲ 57-րդ տարեկան հանդիպման շրջանակներում տեղի ունեցած քննարկումները ծավալվել են այնպիսի կարևոր ոլորտների շուրջ, ինչպիսիք են՝ ՀՀ-ում ներկա տնտեսական և քաղաքական իրավիճակը, ՀՀ և ԱԶԲ միջև ֆինանսավորման ընթացիկ պորտֆելը և վերջինիս ընդլայնման հնարավորությունը, փոխգործակցության նոր գործիքների կիրառումը և այլն:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

ԱԶԲ 57-րդ տարեկան հանդիպման օրակարգը հագեցած էր ԱԶԲ բարձրաստիճան պաշտոնատար անձանց հետ հանդիպումներով: Մասնավորապես.

Ք. Թբիլիսի այցը մեկնարկել է Ասիական զարգացման հիմնադրամի 14-րդ համալրման շրջանակներում կայացած հանդիպմամբ: Կարևորելով Ասիական զարգացման հիմնադրամի դերը և նրա գործունեությունը խոցելի երկրների մարտահրավերները հաղթահարելու գործում՝ ՖՆ կողմից ևս մեկ անգամ վերահաստատվել է Հայաստանի՝ ԱԶՀ դոնոր դառնալու մտադրությունը, ինչը հիանալի հնարավորություն է Հայաստանի համար օգնելու ցածր եկամուտ ունեցող երկրներին՝ այդպիսով երախտագիտություն հայտնելով նախկինում ստացված նմանատիպ աջակցության համար: ՀՀ կառավարության անունից տեղեկացվել է, որ Հայաստանի Հանրապետության կողմից առաջին հատկացումը կկազմի 1 մլն ԱՄՆ դոլար:

Միաժամանակ, նույն օրը տեղի են ունեցել Վրաստանին՝ որպես հյուրընկալ երկրին նվիրված մի շարք պանելային քննարկումներ, որոնցից մեկը նվիրված էր տեղական արժույթին և արժեթղթերի շուկային: Նշյալ պանելային քննարկման ընթացքում հանդես եմ եկել որպես բանախոս:

Այցի հաջորդ օրը կայացել է հանդիպում ԱԶԲ նախագահ Մասացուգու Ասակավայի հետ: Կողմերը քննարկել են ՀՀ և ԱԶԲ միջև համագործակցության վերջին ուղղությունները և

ծրագրերը, այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված հայերի համար բնակարանաշինության ծրագրերի իրականացման հնարավորությունները: Հայկական պատվիրակությունը իր երախտագիտությունն է հայտնել «Արտոնյալ ֆինանսավորման գլոբալ գործիքի հիմնադրամի» իրականացման աջակցության գործակալությունների շարքում ԱԶԲ ընդգրկվելու պատրաստակամության համար: Պայմանավորվածություն է ձեռք բերվել՝ համատեղելու ջանքերը արդյունավետ համագործակցության շարունակականության ապահովման ուղղությամբ:

Նույն օրը հայկական պատվիրակությունը մասնակցել է նաև Հայաստանն ընդգրկող ընկերակցային երկրների խմբի նիստին: ԱԶԲ Գործադիր տնօրենի և վերջինիս թիմի կողմից ներկայացվել են Հայաստանն ընդգրկող խմբի երկրների տնտեսական իրավիճակը, քննարկվել վերջին զարգացումները և առաջիկա տարիների առաջնահերթությունները: Մասնակիցները քննարկել են այն ուղղությունները, որոնցում ԱԶԲ-ն կարող է տրամադրել էլ ավելի հասցեական աջակցություն, ինչպես նաև անդրադարձ է կատարվել 2023 թվականի ընթացքում ԱԶԲ աջակցությամբ իրականացված բարեփոխումներին:

Նիստին հաջորդել են մի շարք երկկողմ հանդիպումներ ինչպես ԱԶԲ, այնպես էլ այլ միջազգային կազմակերպությունների բարձրաստիճան պաշտոնյաների հետ, մասնավորապես.

- ԱԶԲ Կենտրոնական և Արևմտյան Ասիայի վարչության գլխավոր տնօրեն Ե.Ժուկովի հետ առավել մանրամասն քննարկվել են ՀՀ և ԱԶԲ միջև ընթացիկ պորտֆելի ծրագրերը, ինչպես նաև համագործակցության նոր մոտեցումներն ու հնարավոր մեխանիզմները: Հայկական կողմը ևս մեկ անգամ ընդգծել է Հյուսիս-հարավ ներդրումային ծրագրի հարավային հատվածի կառուցման շրջանակներում ԱԶԲ ներգրավվածության կարևորությունը: Մասնավորապես, ընդգծվեց ԱԶԲ փորձը ճանապարհաշինական ծրագրերում և նշյալ ոլորտում ՀՀ հետ ծավալած արդյունավետ համագործակցությունը, կարևորվեց հատկապես նոր ծրագրի նախագծման փուլում ԱԶԲ հետ ակտիվ քննարկումների և խորհրդատվությունների անցկացումը, ինչը թույլ կտա ունենալ էլ ավելի որակյալ ծրագիր և նվազեցնել իրականացմանն առնչվող ռիսկերը:
- Առանձին հանդիպում է կայացել նաև ՕՊԵԿ-ի միջազգային զարգացման հիմնադրամի պատվիրակության հետ: Հիմադրամի գործընկերները տեղեկացրել են

«Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի» Տրանշ 4-ի շրջանակներում Սիսիան-Քաջարան նոր հատվածի, նաև՝ Քաջարանի թունելի կառուցման համաֆինանսավորման հետաքրքրվածության մասին՝ տեղեկացնելով նաև տեխնիկական աջակցության դրամաշնորհային միջոցների մոբիլիզացման հնարավորության մասին: Հիմնադրամը հետաքրքրված է նաև Հայաստանի մասնավոր հատվածի հետ համագործակցության ակտիվացմամբ:

- Եվրոպական ներդրումային բանկի (ԵՆԲ) փոխնախագահ Թերեզա Չերվինսկայի գլխավորած պատվիրակության հետ հանդիպման ընթացքում առավելապես քննարկվել են Հայաստանում ԵՆԲ ընթացիկ պորտֆելի, ինչպես նաև նախատեսվող նոր ծրագրերին առնչվող հարցեր: Մասնավորապես, կողմերն անդրադարձել են Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի Սիսիան-Քաջարան նոր հատվածի հյուսիսային և հարավային մասերի կառուցմանը, որտեղ ԵՆԲ-ը, համապատասխանաբար ԱԶԲ-ի ու ՎԶԵԲ-ի հետ, հանդես է գալու որպես համաֆինանսավորող: Անդրադարձ է կատարվել նաև Սյունիքում իրականացման ենթակա ծրագրերի շրջանակային վարկին, որի հայեցակարգն արդեն իսկ մշակված է: ՖՆ պատվիրակությունը վերահաստատել է նշյալ ծրագրի իրագործման ՀՀ կառավարության հանձնառությունը: Միաժամանակ, հաշվի առնելով «Երևանի կոշտ թափոնների կառավարման» ծրագրի չեղարկման վերաբերյալ ՀՀ կառավարության մտադրությունը, ԵՆԲ-ի կողմից կրկին տեղեկացվել է չեղարկման փոխարեն նշյալ ծրագրի նպատակի վերաձևակերպման ու ներգրավված 8 մլն եվրո վարկային միջոցները Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց աջակցության ծրագրերի ֆինանսավորմանն ուղղելու պատրաստակամության մասին: Բացի այդ, ԵՆԲ-ը հետաքրքրված է Հայաստանում էներգետիկ ոլորտի և դպրոցաշինության ծրագրերի ֆինանսավորմամբ: ՖՆ պատվիրակությունն առաջարկել է նաև դիտարկել Հայաստանում ԵՆԲ գրասենյակ բացելու հնարավորությունը՝ հաշվի առնելով ԵՆԲ հետ ակտիվ բազմաոլորտ համագործակցությունը:

Մայիսի 4-ին հայկական պատվիրակությունը մասնակցել է ԱԶԲ հիմնադիր համաձայնագրում առաջիկայում նախատեսվող փոփոխության վերաբերյալ քննարկմանը: Մասնավորապես, քննարկվել են ԱԶԲ հիմնադիր համաձայնագրի 12-րդ հոդվածի

փոփոխության՝ ԱԶԲ անդամ պետությունների համար իրանաբանորեն պարտադիր ուժ ստանալու ընթացակարգերը:

Դրան հաջորդել է ԱԶԲ Կառավարիչների լիագումար նիստը, որը այս տարի անց էր կացվում «Միլիարդներից դեպի տրիլիոններ-Կլիմայի փոփոխության համար մասնավոր հատվածի զարգացման խթանում» խորագրի ներքո:

Նույն օրը հայկական կողմը հանդիպել է նաև ԱԶԲ մասնավոր հատվածի թիմի հետ: Հանդիպման ընթացքում մանրամասն ներկայացվեց ՀՀ կառավարության կողմից մասնավոր հատվածի զարգացման և ֆինանսավորման ուղղությամբ իրականացվող քաղաքականությունը, ինչպես նաև նշյալ ոլորտում բարեփոխումների օրակարգը: ԱԶԲ ներկայացուցիչները բարձր գնահատեցին ՀՀ կառավարության կողմից իրականացվող բարեփոխումները, և նշեցին, որ ՀՀ հետ ընթացիկ հանագործակցությունը դրական է գնահատվում: Հանդիպման ընթացքում անդրադարձ կատարվեց այնպիսի կարևոր թեմաների, ինչպիսիք են տվյալ ոլորտում կարողությունների զարգացման կարիքները, տարբեր ենթակառուցվածքային ծրագրերում մասնավոր հատվածի ներդրումների ներգրավման հնարավորությունները, ինչպես նաև ԱԶԲ ներգրավվածությունը շուկաների զարգացման հարցում: Պայմանավորվածություն ձեռք բերվեց՝ շարունակելու քննարկումները նշյալ ուղղությամբ:

Տարեկան հանդիպումների 3-րդ օրը եզրափակվել է ԱԶԲ Նախագահի տեղակալի հետ հանդիպմամբ: Հայկական կողմը կարևորել է տարածաշրջանային ինտեգրման նախաձեռնություններին ՀՀ ինտեգրման հարցը և պատրաստակամություն հայտնել էլ ավելի ակտիվ գործունեություն ծավալելու այդ ուղղությամբ:

ԱԶԲ 57-րդ տարեկան հանդիումը եզրափակեց մայիսի 5-ին կայացած ԱԶԲ Կառավարիչների Գործարար նիստը, որին ԱԶԲ Նախագահի գլխավորությամբ մասնակցում էին բոլոր պատվիրակությունները: Հանդիպման մեկնարկին հաստատվեցին ընթացակարգային մի շարք փաստաթղթեր, ինչից հետո մասնակից պետությունները սկսեցին հանդես գալ առանձին ելույթներով: Հայկական պատվիրակության ղեկավարը նույնպես հանդես եկավ առանձին ելույթով: Մասնավորապես, նշվեց, որ Հայաստանը վերահաստատում է իր հանձնառությունը ԱԶԲ 2030 ռազմավարությանը, և որ դրա նպատակները հետևողականորեն արտացոլվում են ՀՀ հիմնական առաջնահերթ քաղաքականություններում և ծրագրերում: Այնուհետև անդրադարձ կատարվեց աճող աշխարհաքաղաքական լարվածության պայմաններում

Հարավային Կովկասով և Կենտրոնական Ասիայով անցնող առևտրային ուղիների՝ որպես Արևելքի և Արևմուտքի միջև այլընտրանքային ուղու կարևորությանը:

Վերահաստատվեց ՀՀ հանձնառությունը՝ մաս կազմելու տարածաշրջանային այն բոլոր նախաձեռնություններին, որոնք կնպաստեն նոր տրանսպորտային ուղիների ստեղծմանը, ինչն իր հերթին թույլ կտա բարձրացնել Հարավային Կովկասի աշխարհաքաղաքական նշանակությունը և խթանել աճի այն հսկայական ներուժը, որը չի օգտագործվել տարիներ շարունակ տևած հակամարտությունների պատճառով:

8. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝**

- Ասիական զարգացման բանկի նախագահի հետ հանդիպման ընթացքում երկուստեք պայմանավորվածություն է ձեռք բերվել համատեղելու ջանքերը ՀՀ և ԱԶԲ միջև համագործակցության շրջանակի և փոխգործակցության ընդլայնման նպատակով, ինչպես նաև ապահովելու ընթացիկ և առաջիկայում նախատեսվող ծրագերի ներքո ակտիվ փոխգործակցությունը:
- ԱԶԲ Կենտրոնական և Արևմտյան Ասիայի վարչության գլխավոր տնօրեն Ե.Ժուկովի հետ հանդիպման ընթացքում պայմանավորվածություն է ձեռք բերվել ջանքերն ակտիվացնել Հյուսիս-հարավ ներդրումային ծրագրի շուտափույթ մեկնարկին միտված բովանդակային և ընթացակարգային հարցերի լուծման ուղղությամբ՝ զուգահեռաբար շարունակելով փաստաթղթային և ընթացակարգային ձևակերպումներն ու աշխատանքները:
- ԵՆԲ պատվիրակության հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել շարունակել քննարկումները Կովկասյան էլեկտրահաղորդման ցանցի համաֆինանսավորման ուղղությամբ և շարունակել աշխատանքները «Երևանի կոշտ թափոնների կառավարման» ծրագրի չեղարկման ու նշյալ 8 մլն եվրո վարկային միջոցները Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց աջակցության ծրագրերի ֆինանսավորմանը հատկացնելու ուղղությամբ:
- ԱԶԲ նախագահի տեղակալի հետ հանդիպմանը, հաշվի առնելով ԱԶԲ փորձը, պայմանավորվածություն է ձեռք բերվել, որ ԱԶԲ կողմից կիրականացվի ուսումնասիրություն, թե ինչ ազդեցություն կունենա Հարավային Կովկասում

ենթակառուցվածքների ապաշրջափակումը երկրների տնտեսությունների վրա: ԱԶԲ թիմը դրական է արձագանքել նշյալ առաջարկին և խոստացել առաջիկայում անդրադառնալ վերջինիս:

- ՕՊԵԿ-ի միջազգային զարգացման հիմնադրամի պատվիրակության հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել Հյուսիս-հարավի ճանապարհային միջանցքի առանձին տրանշների համաֆինանսավորման մասով ֆինանսական պայմանների առաջարկներ ստանալ ՕՊԵԿ-ից և ՖՆ միջնորդությամբ շարունակել ՀՀ էկոնոմիկայի նախարարության հետ Հայաստանի մասնավոր հատվածում համագործակցության ծրագրերի իրականացման հնարավորությունների քննարկումները:

9. Ստորագրությունը, ամսաթիվը՝
08.05.2024թ.

X _____